ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շարժական կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 29.07.2024թ. N 237/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.08.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Զ.Աղաջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ս.Ավագիմյանը, Ա.Նազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Զ.Աղաջանյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

-«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3" ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/1 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Զ. Աղաջանյան

Անդամներ՝ Ս. Ավագիմյան

Ա. Նազարյան

Քարտուղար՝ Գ. Ղազարյան